ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

9 սեպտեմբերի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

113
(3322)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿԱՊԱՆՈՒՄ ՔՊ-Ն ՆՈՐ ԹԵԿՆԱԾՈՒ ՈՒՆԻ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, Կապանում առաջիկայում սպասվող համայնքապետի ընտրություններին ընդառաջ, իշխանությունը, կարծես, վերջնականապես կողմնորոշվել է իր թեկնածուի հարցում: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ ՔՊ-ն մտադիր է համայնքապետի պաշտոնում առաջադրել Սյունիքի նախկին փոխմարզպետ, ներկայում Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում կառավարության ներկայացուցիչ Նարեկ Բաբայանին: Նրան, սակայն, հեշտ պայքար չի սպասվում: Ընտրություններին պատրաստվում է մասնակցել նաեւ Կապանի գործող համայնքապետ Գեւորգ Փարսյանը, որը համայնքում բավականին բարձր ընդունելություն ունի եւ, ըստ մեր աղբյուրների, լուրջ ընտրական ռեսուրս ու ձայների կայուն բազա:

Ուշագրավ է, որ այս իրավիճակում ՔՊ-ն որոշել է գործի դնել իր զինանոցում մնացած ամենաազդեցիկ տարբերակներից մեկը՝ Նարեկ Բաբայանին: Վերջինս Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում կառավարության ներկայացուցիչ դառնալուց հետո ոչ միայն զգալիորեն մեծացրել է իր ազդեցությունը Սյունիքում, այլեւ, էականորեն ավելացրել է իր ունեցվածքը:

Ըստ էության, իշխանության հաշվարկը պարզ է. Կապանում, որտեղ գործող համայնքապետն ունի ամուր դիրքեր, միայն ՔՊ-ի քաղաքական բրենդը կարող է բավարար չլինել հաղթանակի համար: Ուստի խաղադրույքը դրվում է Բաբայանի անձնական ազդեցության, կապերի եւ տարիների ընթացքում ձեւավորված հնարավորությունների վրա:

Կստացվի արդյոք իշխանությանը Նարեկ Բաբայանի միջոցով վերցնել Կապանը գործող համայնքապետից, թե ՔՊ-ի այս հաշվարկն էլ չի աշխատի՝ ցույց կտան ընտրությունները:

Բյուրեղավանում ջրի որակի շուրջ առաջացած մտահոգությունները նոր թափ են ստացել: Սեպտեմբերի 6-ին վեց քաղաքացի դիմել է բուժօգնության, եւ նախնական տվյալներով՝ նրանց մոտ արձանագրվել է աղիքային վարակ: Իրավիճակի ֆոնին Հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնը՝ ՀՎԿԱԿ-ը, Բյուրեղավանի բնակիչներին հորդորել է ժամանակավորապես չխմել ծորակի ջուրը եւ այն չօգտագործել սննդի պատրաստման նպատակով: Ավելի ուշ ՀՎԿԱԿ-ը տեղեկացրել է, որ ծորակի ջուրը բնակիչները կարող են օգտագործել միայն եռացնելուց հետո: Այս հանգամանքը, սակայն, մի շարք հարցեր է առաջացնում: Մասնավորապես, ՀՎԿԱԿ-ի առաջին նախազգուշացումը տարածվել է այն ժամանակ, երբ ջրի լաբորատոր հետազոտության վերջնական արդյունքները դեռեւս հայտնի չեն եղել: Այսինքն՝ բնակիչներին ջուրը չօգտագործելու հորդորը տրվել է նախքան հետազոտությունների վերջնական պատկերի ստացումը: ArmLur.am-ը Բյուրեղավանում զրուցել է համայնքապետ Հակոբ Բալասյանի հետ: Զրույցի ընթացքում նկատելի էր համայնքապետի ընդգծված վերաբերմունքը ջրամատակարարման, ջրի որակի եւ այդ հարցերում համայնքապետարանի ու «Վեոլիա Ջուր»-ի պատասխանատվության մասին մեր հարցադրումներին:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Հայաստանում ցեմենտի շուկայում լուրջ խնդիրներ են առաջացել: «Ժողովուրդ» օրաթերթին ահազանգած մի շարք կառուցապատողներ հայտնում են, որ վերջին շրջանում ցեմենտի էական դեֆիցիտ է նկատվում, եւ անհրաժեշտ քանակությունը ձեռք բերելը գնալով դժվարանում է: Մեր զրուցակիցների փոխանցմամբ՝ որոշ կառուցապատողներ ստիպված են բառացիորեն տարբեր վաճառքի կետերից փոքր խմբաքանակներով ցեմենտ հավաքել՝ շինարարական աշխատանքները չկանգնեցնելու համար: Որոշ դեպքերում ապրանքը ձեռք են բերում նույնիսկ պարտքով կամ նախնական պայմանավորվածություններով՝ սպասելով նոր խմբաքանակների մատակարարմանը: «Ժողովուրդ» օրաթերթին առայժմ չի հաջողվել պաշտոնապես պարզել, թե ինչով է պայմանավորված շուկայում ստեղծված իրավիճակը, եւ արդյոք պետական մարմինները արձանագրել են ցեմենտի պակաս: Սակայն ուշագրավ է, որ խնդիրը ծագում է հենց այն ժամանակահատվածում, երբ Հայաստանի ցեմենտի շուկայի երկու խոշոր խաղացողների շուրջ էական փոփոխություններ են տեղի ունենում: «Արարատցեմենտ»-ի շուրջ ամիսներ շարունակ իրավական եւ քաղաքական գործընթացներ են ընթանում: Նիկոլ Փաշինյանի՝ գործարանի պետականացման մասին հայտարարությունից հետո ընկերության բաժնետոմսերի կառավարումն ու պահպանումը հանձնվել է պետությանը, իսկ հուլիսի 31-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամանով ընկերությունում կառավարիչ է նշանակվել Դավիթ Գեւորգյանը: Գործարանը փաստացի խլվեց կալանավորված գործարար Գագիկ Ծառուկյանից:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Երեւանի քաղաքապետարանը պատրաստվում է հերթական խոշորածավալ հիմնանորոգմանը. սեպտեմբերի 10-ից նախատեսվում է սկսել Դավիթ Անհաղթի եւ Կոմիտասի փողոցներն իրար միացնող ուղեանցի՝ «Լամբադա» կամրջի հիմնանորոգումը: ArmLur.am-ի հարցմանն ի պատասխան՝ Երեւանի քաղաքապետարանից հայտնել են, որ աշխատանքները նախատեսվում է իրականացնել 110 օրացուցային օրվա ընթացքում, իսկ կապալառուի հետ կնքված պայմանագրի արժեքը 324 մլն դրամ է: Թվում է՝ հերթական անհրաժեշտ ծրագիրն է մայրաքաղաքի ենթակառուցվածքների բարելավման համար: Սակայն Տիգրան Ավինյանի ղեկավարած քաղաքապետարանի դեպքում արդեն օրինաչափ հարց է առաջանում՝ նոր ծրագիր սկսելուց առաջ նախորդը վերջնականապես ավարտե՞լ են: Բանն այն է, որ քաղաքապետարանը դեռ մոտ մեկ ամիս առաջ հայտարարեց Կիեւյան կամրջի հիմնանորոգման աշխատանքների ավարտի մասին, Նիկոլ Փաշինյանը մեծ ոգեւորությամբ գնաց եւ ընդունեց շինարարությունը, սակայն կամրջի մայթերը մինչ այսօր քանդված են: Այսինքն՝ քաղաքապետարանի եւ կառավարության հաշվետվություններում աշխատանքը կարող է ավարտված համարվել, մինչդեռ քաղաքացին ամեն օր իր աչքով տեսնում է կիսատ մնացած պատկերը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԲԱՑ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿ»

ArmLur.am-ը զրուցել է Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Գեւորգ Ստեփանյանի հետ Անդրանիկ Թեւանյանի եւ Արեգնազ Մանուկյանի գործերով դատական անդրանիկ նիստի մասին:

- Պարոն Ստեփանյան, այսօր տեղի է ունենալու Անդրանիկ Թեւանյանի եւ Արեգնազ Մանուկյանի գործով առաջին դատական նիստը: Ինչ սպասումներ ունեք դատարանից, եւ ի՞նչ որոշում, ըստ Ձեզ, կարող է կայացվել:

- Նախ պետք է հիշեցնենք, որ այս շինծու եւ կարված գործը սկսվեց այն ժամանակ, երբ «Մայր Հայաստան» կուսակցությունը «Բարգավաճ Հայաստան» կուսակցության հետ համատեղ մասնակցեց ԱԺ պետական ընտրություններին: «Մայր Հայաստան» կուսակցության նախագահը Լոռու մարզում ստացել էր երկրորդ հորիզոնականը: Դրանից հետո ժամանակավոր կառավարության ղեկավարը հայտարարեց, որ իբր պետական դավաճանության հոդվածով մեղադրանք է առաջադրվել, եւ իբր Անդրանիկ Թեւանյանը որոշակի գումարի դիմաց այլ երկրի է փոխանցել տեղեկատվություն: Այսօր, երբ արդեն առաջին դատական նիստն է, տեսնում ենք, որ այդ մեղադրանքներն էականորեն փոփոխվել են: Նախկինում ներկայացված պետական դավաճանության վերաբերյալ պնդումներն այլեւս գործի նույն ձեւով չեն ներկայացվում: Մեր համոզմամբ՝ այս ամենն արվել էր «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախընտրական քարոզարշավին հարված հասցնելու եւ մարդկանց մոտ տարակուսանք առաջացնելու համար: Այդ գործընթացի հետեւանքով մենք կորցրեցինք հազարավոր ձայներ: Այնուամենայնիվ, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը «Մայր Հայաստանի» հետ միասին հաղթահարեց անցողիկ շեմը: Մեր գնահատմամբ՝ մեզանից գողացվել է շուրջ 60 հազար քվե եւ հինգ մանդատ: Այսօր մենք պնդում ենք, որ դատական նիստը պետք է լինի բաց եւ թափանցիկ: Հասարակությունը պետք է հնարավորություն ունենա տեսնելու, թե ինչի վրա է կառուցված այս գործը: Մենք վստահ ենք, որ նիստի ընթացքում շատ բան կբացահայտվի:

- Դուք ասում եք, որ գործը քաղաքական ենթատեքստ ունի: Այս դեպքում ի՞նչ եք ակնկալում հենց առաջին նիստից:

- Մեր նպատակն է, որ հասարակությունը տեսնի իրականությունը: Մենք մասնակցելու ենք առաջին դատական նիստին եւ մեր հասարակության ու կուսակիցների միջոցով փորձելու ենք ապահովել, որ նիստը բաց անցկացվի: Մենք ուզում ենք, որ բոլորը տեսնեն՝ ինչ հիմքերի վրա է կառուցված այս գործը եւ արդյոք այն ունի իրավական հիմնավորում:

- Իսկ Արեգնազ Մանուկյանի՝ դստեր հետ տեսակցությունների հետ կապված ի՞նչ իրավիճակ է:

- Սկզբում Արեգնազ Մանուկյանի բոլոր տեսակցությունները փակված էին: Հասարակության եւ մեր բոլորի ճնշումների արդյունքում հնարավոր եղավ, որպեսզի նա տեսակցի իր անչափահաս դստերը: Երեխայի հետ աշխատում են հոգեբաններ, որովհետեւ այս իրավիճակը նրա համար բավականին ծանր է: Նա չէր կարողանում հանդիպել մորը, նույնիսկ ծննդյան օրը նրան հնարավորություն չտվեցին հանդիպելու: Այստեղ նույնպես մենք տեսնում ենք այն վերաբերմունքը, որը, մեր կարծիքով, որեւէ կերպ չի համապատասխանում մարդկային եւ բարոյական չափանիշներին:

- Հետընտրական գործընթացներում մենք տեսնում ենք նաեւ նոր կալանավորումներ: Կալանավորվել են Ռոբերտ Քոչարյանը, Գագիկ Խաչատրյանը եւ այլ ազդեցիկ անձինք: Ընդդիմադիր դաշտը սա որակում է որպես քաղաքական հետապնդում: Դուք համաձա՞յն եք այդ գնահատականի հետ:

- Հայաստանի Հանրապետությունում երբեւէ նման քանակի քաղաքական բանտարկյալներ չեն եղել: Նրանք, ովքեր չեն ընդունում այն գիծը, որն այս պահին տանում է ժամանակավոր իշխանությունը, ենթարկվում են հալածանքների եւ քաղաքական հետապնդումների: Մենք այսօր ունենք աննախադեպ իրավիճակ, երբ բազմաթիվ ընդդիմադիր գործիչներ հայտնվում են կալանավայրերում:

- Հատկանշական էր հատկապես Գագիկ Խաչատրյանի կալանավորումը: Ինչպե՞ս եք գնահատում այդ գործընթացը: Արդյո՞ք այն համարում եք մարդկային եւ բարոյական:

- Ես մանրամասն չեմ ցանկանում մտնել այդ գործի իրավական կողմի մեջ, բայց տեսել եմ այն տեսանյութը, որը տարածվել էր: Այն, ինչ ես տեսա, իմ գնահատմամբ, որեւէ կերպ մարդկային վերաբերմունքի տպավորություն չէր թողնում: Իրավական գնահատականը, բնականաբար, պետք է տան համապատասխան մարմինները, բայց մարդկային եւ բարոյական տեսանկյունից այդ վերաբերմունքը բազմաթիվ հարցեր է առաջացնում:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՌԻԳԱՅՈՒՄ

Ռիգայում ՀՀ արտաքին գործերի եւ միջազգային առեւտրի նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Լատվիայի Հանրապետության Սաեյմայի նախագահ Դայգա Միերինյայի հետ:

Հանդիպմանը մասնակցել է նաեւ Հայաստանի խորհրդարանի հետ համագործակցության խթանման՝ բարեկամական խմբի ղեկավար Գունար Կուրտիսը, տեղեկացնում են նախարարությունից: «Զրուցակիցները գոհունակությամբ նշել են Հայաստանի եւ Լատվիայի միջեւ հարաբերությունների զարգացման աճող դինամիկան: Ընդգծվել է երկու երկրների կայուն զարգացման համար կարեւոր ոլորտներում, այդ թվում՝ տնտեսություն, էներգետիկա, համագործակցության խթանման հարցում առկա մեծ պատրաստակամությունը: Հանդիպմանն ընդգծվել է նաեւ Հայաստանի եւ Լատվիայի խորհրդարանների միջեւ բարեկամության խմբերի միջեւ ակտիվ համագործակցության շարունակականության, ինչպես նաեւ Հայաստան-Հյուսիսային Եվրոպա-Բալթյան երկրներ (NB8) ձեւաչափում փոխգործակցության հետեւողական զարգացման հարցում խորհրդարանական հարթակի կարեւորությունը:

Նախարար Միրզոյանը եւ Լատվիայի Սաեյմայի նախագահն անդրադարձ են կատարել նաեւ Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգին: Ի թիվս այլ ուղղությունների, կարեւորվել է ՀՀ տնտեսական դիմակայունության ամրապնդման նպատակով առկա մեխանիզմների լավագույնս իրացումը:

Զրուցակիցները մտքեր են փոխանակել դինամիկ փոփոխվող տարածաշրջանային իրողությունների շուրջ: «Խաղաղության հաստատումը տարածաշրջանային փոխկապակցվածության զարգացման աննախադեպ հնարավորություններ է ստեղծել, եւ Հայաստանն առավելագույնս ջանքեր է գործադրում ենթակառուցվածքների ցանկի զարգացման եւ այդ հնարավորությունների արդյունավետ իրացման ուղղությամբ»,- նշել է նախարար Միրզոյանը: Մտքեր են փոխանակվել խաղաղության հետագա ինստիտուցիոնալացման հարցերի շուրջ: Անդրադարձ է կատարվել հումանիտար բնույթի հարցերի»,-ասված է հաղորդագրության մեջ:

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ Է ՎԻԵՆՆԱ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանը սեպտեմբերի 13-15-ը գործուղվելու է Ավստրիայի Հանրապետություն՝ Վիեննա:

Կառավարության որոշման համաձայն՝ Խուդաթյանը Վիեննայում մասնակցելու է Ատոմային էներգիայի միջազգային գործակալության գլխավոր համաժողովի 70-րդ նստաշրջանին:

Որոշմամբ նախատեսվում է, որ նախարարի գործուղման ծախսերը կկատարվեն 2026 թվականի պետական բյուջեով Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությանը հատկացված միջոցների հաշվին:

Գործուղումից վերադառնալուց հետո Դավիթ Խուդաթյանը եռօրյա ժամկետում պետք է ներկայացնի գործուղման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն:

Որոշումը ստորագրել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Ս. Գ.

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

Տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նիստում Տրդատ Սարգսյանի նախագահությամբ հաստատվել է հանձնաժողովի աշխատակարգը, որից հետո քննարկվել է հանձնաժողովի նախագահի տեղակալի ընտրության հարցը: «ԱԺ կանոնակարգ» օրենքի համաձայն՝ «Ուժեղ Հայաստան» խմբակցությունն այս պաշտոնում առաջադրել է Մամիկոն Ասլանյանի թեկնածությունը:

Խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանը նախ ներկայացրել է իրենց թեկնածուի կենսագրական տվյալներն ու աշխատանքային գործունեությունը, որից հետո Մամիկոն Ասլանյանը մանրամասնել է իր տեսլականն առաջիկա աշխատանքի առնչությամբ: Թեկնածուն կարեւորել է խորհրդարանական լիազորությունների շրջանակում տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրմանը նպաստելը:

ԱԺ նախագահի տեղակալ Արամ Վարդեւանյանի գնահատմամբ եւս թեկնածուն իր կենսագրությամբ եւ իրավական համայնքում ունեցած հեղինակությամբ առավել քան օրինակելի է:

Քվեարկության արդյունքում Մամիկոն Ասլանյանն ընտրվել է հանձնաժողովի նախագահի տեղակալ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ

ԱԺ «Ուժեղ Հայաստան» դաշինքի պատգամավոր Մարիաննա Ղահրամանյանն ընտրվեց ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ը գրել էր, որ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահի պաշտոնում առաջադրվել է «Ուժեղ Հայաստան» խմբակցության պատգամավոր Մարիանա Ղահրամանյանի թեկնածությունը:

ԼՈՒՍԻՆԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ Է ԱՄՆ-ԻՆ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը Truth Social-ի իր էջում լուսնի լուսանկար է հրապարակել՝ այն մակագրելով «Լուսինը մերն է»: Հայտարարությունը կրկին ուշադրություն է հրավիրել նախկինում հնչեցված այն պնդումների վրա, թե ԱՄՆ-ը կարող է հավակնել Լուսնի նկատմամբ սեփականության:

Սակայն նման պնդումը հակասում է 1967 թվականի Տիեզերական տարածության մասին պայմանագրին, որի մշակմանը մասնակցել է նաեւ ԱՄՆ-ը: Պայմանագիրը, որին միացել են ավելի քան 100 երկրներ, սահմանում է, որ տիեզերական տարածությունը եւ երկնային մարմինները չեն կարող որեւէ պետության կողմից ազգային սեփականություն համարվել՝ ինքնիշխանության, օգտագործման, օկուպացման կամ որեւէ այլ եղանակով:

Լուսնի մասին գրառումից քիչ առաջ Թրամփը հրապարակել էր նաեւ ԱՄՆ-ի Տիեզերական ուժերի համար նախատեսված նոր համազգեստների պատկերներ: Դրանք, ըստ հրապարակման, արհեստական բանականությամբ ստեղծված պատկերներ էին: Համազգեստները ներկայացված էին մուգ երանգներով՝ «տիեզերական մոխրագույն», «կեսգիշերային սեւ», «արծաթագույն մոխրագույն» եւ «սատինե սեւ» գույներով: Սոցցանցերում դրանց արտաքին տեսքը համեմատվել է «Աստղային պատերազմներ» ֆիլմաշարի կայսերական բանակի ոճի հետ:

Թրամփի հրապարակումների շարքում եղել է նաեւ Նյու Մեքսիկոյի քարտեզ, որի վրա «Mexico» անվանումը կարմիրով ջնջված էր եւ փոխարինված «America» անվամբ: Սակայն պարզ չէ՝ դա որեւէ իրական նախաձեռնության մասին է, թե պարզապես քաղաքական ուղերձ:

Թրամփի անվանափոխությունների քաղաքականությունը

Վերջին շրջանում Թրամփի վարչակազմի քաղաքականության մեջ նկատելի է նաեւ աշխարհագրական անվանումների փոփոխության թեման:

Օգոստոսի 27-ին Թրամփը հայտարարել էր, որ պաշտոնապես փաստաթղթեր է ներկայացրել Օնտարիո լճի անվանումը «Lake America» («Ամերիկա լիճ») փոխելու համար: Այս քայլը տեղի է ունեցել ԱՄՆ-ի եւ Կանադայի միջեւ առեւտրային լարվածության ֆոնին:

Օնտարիո անվանումը գալիս է Վենդատ (Հուրոն-Վենդատ) բնիկ ժողովրդի լեզվից եւ մոտ 400 տարվա պատմություն ունի: Այն ավելի հին է, քան ԱՄՆ-ն ու Կանադան՝ որպես ժամանակակից պետություններ:

Վենդատ ժողովրդի ներկայացուցիչ, Մեծ ղեկավար Պիեռ Պիկարը քննադատել է Թրամփի որոշումը՝ հայտարարելով, որ այն իրենց պատմությունը քաղաքական բրենդավորմամբ փոխարինելու փորձ է:

Թրամփի վերջին հայտարարությունները լայն արձագանք են ստացել սոցցանցերում, սակայն դրանցից ոչ մեկը ինքնին իրավական ուժ չունի՝ փոխելու ԱՄՆ նահանգների կամ միջազգային տարածքների իրավական կարգավիճակը:

Ա. Վ.

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ԳԱԼ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ

Գերմանիայում կիրակի օրը կայացած տեղական ընտրությունները վերածվել են ոչ միայն մեկ դաշնային երկրամասի քաղաքական իրադարձության, այլեւ համաեվրոպական նշանակության զարգացումների: «Այլընտրանք Գերմանիայի համար» (AfD) կուսակցությունը պատմական արդյունք է գրանցել Սաքսոնիա-Անհալթում՝ առաջին անգամ Գերմանիայի վերամիավորումից հետո ծայրահեղ աջ համարվող քաղաքական ուժի համար ստեղծելով իշխանության գալու իրական հնարավորություն տարածաշրջանային մակարդակում:

Թեեւ Սաքսոնիա-Անհալթը Գերմանիայի 16 երկրամասերից փոքրերից մեկն է եւ երկրում ընտրողների ընդհանուր թվի համեմատությամբ նրա ազդեցությունը սահմանափակ է, ընտրության քաղաքական նշանակությունը շատ ավելի մեծ է: AfD-ի հաջողությունը նոր հարված է Գերմանիայի ավանդական քաղաքական ուժերին եւ հերթական ազդանշանը, որ երկրում փոխվում են ընտրողների քաղաքական նախասիրությունները:

Ո՞վ է AfD-ն

«Այլընտրանք Գերմանիայի համար» կուսակցությունը՝ AfD-ն, ստեղծվել է 2013 թվականին: Սկզբնական շրջանում կուսակցության հիմնական շեշտադրումը եվրագոտու եւ եվրոպական ինտեգրման նկատմամբ քննադատությունն էր, սակայն հետագայում դրա քաղաքական օրակարգում ավելի մեծ տեղ զբաղեցրին միգրացիայի սահմանափակումը, ազգային ինքնության, անվտանգության եւ Գերմանիայի ինքնիշխանության հարցերը:

Կուսակցությունը Գերմանիայում հայտնի է հատկապես իր խիստ հակամիգրացիոն դիրքորոշմամբ: AfD-ն հանդես է գալիս Գերմանիա ներգաղթի կրճատման, ապօրինի միգրացիայի դեմ ավելի խիստ միջոցների եւ ազգային պետության դերակատարության ուժեղացման օգտին:

Նրանց քաղաքական հռետորաբանության մեջ առանցքային տեղ ունի նաեւ գերմանական ազգային ինքնության եւ հայրենասիրության թեման: Սաքսոնիա-Անհալթում կուսակցության նախընտրական կարգախոսներից մեկը եղել է «Ամեն ինչ հնարավոր է» գաղափարը, իսկ ընտրողներին առաջարկվել է կրկին հպարտանալ իրենց երկրով:

Միաժամանակ AfD-ն կոշտ քննադատում է Գերմանիայի քաղաքական «էստաբլիշմենթին»՝ պնդելով, որ ավանդական կուսակցությունները չեն կարողացել լուծել հասարակության առջեւ ծառացած խնդիրները:

Ինչո՞վ է AfD-ն հայտնի

AfD-ի քաղաքականությունը առանձնանում է մի քանի առանցքային ուղղություններով: Առաջինը միգրացիայի հարցն է: Կուսակցությունը պնդում է, որ Գերմանիան պետք է սահմանափակի ներգաղթը եւ խստացնի միգրացիոն քաղաքականությունը:

Երկրորդ կարեւոր ուղղությունը Եվրամիության նկատմամբ քննադատական վերաբերմունքն է: AfD-ն համարվում է եվրասկեպտիկ քաղաքական ուժ եւ հաճախ քննադատում է Բրյուսելի կողմից ընդունվող որոշումները՝ առաջնային համարելով Գերմանիայի ազգային շահերն ու ինքնիշխանությունը:

Երրորդ ուղղությունը Ռուսաստանի եւ Ուկրաինայի պատերազմի հարցն է: AfD-ն դեմ է Ուկրաինային Գերմանիայի կողմից ռազմական օգնության շարունակական տրամադրմանը, հանդես է գալիս Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների վերանայման օգտին եւ կողմ է ռուսական էներգակիրների ներմուծման վերականգնմանը:

Այս դիրքորոշումն առանձնահատուկ նշանակություն ունի Գերմանիայի համար, քանի որ Ռուսաստանի կողմից 2022 թվականին Ուկրաինայի դեմ լայնածավալ պատերազմից հետո Բեռլինը հրաժարվեց ռուսական էներգակիրներից, ինչն ազդեց նաեւ գերմանական արդյունաբերության վրա:

Ինչո՞ւ է AfD-ի հաղթանակը հատկապես կարեւոր

Գերմանիայում այս արդյունքը տեղի է ունենում երկրի կենտրոնական իշխանության համար քաղաքական բարդ իրավիճակում: AfD-ի աճող աջակցությունը լրացուցիչ ճնշում է ստեղծում Բեռլինի իշխանությունների եւ հատկապես կանցլեր Ֆրիդրիխ Մերցի համար:

Մերցը նախկինում խոստացել էր նվազեցնել AfD-ի ազդեցությունն ու ժողովրդականությունը, սակայն կուսակցության նոր հաջողությունը ցույց է տալիս, որ այդ խնդիրը շարունակում է մնալ չլուծված:

Ստեղծված իրավիճակն առավել ուշագրավ է նաեւ Գերմանիայի պատմական անցյալի պատճառով: Երկրորդ համաշխարհային պատերազմից եւ նացիստական ռեժիմի տապալումից հետո Գերմանիայում ծայրահեղ ազգայնական քաղաքականության նկատմամբ վերաբերմունքը առանձնահատուկ զգայուն է:

Գերմանիայի իշխանությունները AfD-ի առանձին կառույցներ, այդ թվում՝ Սաքսոնիա-Անհալթի մասնաճյուղը, դասակարգել են որպես ծայրահեղական բնույթի կառույցներ: Կուսակցությունը, սակայն, նման բնորոշումները չի ընդունում:

Ինչո՞ւ է Արեւելյան Գերմանիան ավելի շատ աջակցում AfD-ին

AfD-ի աջակցության հիմնական կենտրոններից մեկը Գերմանիայի արեւելքն է: Այստեղ տնտեսական եւ սոցիալական իրավիճակը երկար տարիներ տարբերվել է երկրի արեւմտյան հատվածից:

Սաքսոնիա-Անհալթը համարվում է Գերմանիայի ամենաաղքատ երկրամասերից մեկը: Արեւելյան Գերմանիայի որոշ հատվածներում պահպանվում է նաեւ նախկին Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության ժամանակաշրջանի նկատմամբ կարոտախտը, որը գերմանական քաղաքական բառապաշարում հաճախ անվանում են «Ostalgie»:

Այս միջավայրում AfD-ի հակամիգրացիոն, սոցիալական դժգոհությունների վրա հիմնված եւ Ռուսաստանի հետ հարաբերությունների մեղմացման կողմնակից քաղաքականությունը կարողանում է ավելի մեծ աջակցություն ստանալ:

Կուսակցությունը պնդում է, որ ավանդական քաղաքական ուժերը տասնամյակներ շարունակ չեն կարողացել բավարար չափով արձագանքել հասարակության խնդիրներին՝ սկսած տնտեսական դժվարություններից մինչեւ անվտանգություն եւ միգրացիա:

Ի՞նչ կապ ունի այստեղ Դոնալդ Թրամփը

AfD-ի քաղաքական հռետորաբանության մեջ նկատվում են նաեւ այնպիսի մոտեցումներ, որոնք համեմատվում են ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի «Make America Great Again» քաղաքական ուղերձների հետ:

Հակամիգրացիոն քաղաքականությունը, «ազգային շահը՝ առաջին հերթին» մոտեցումը, ավանդական քաղաքական էլիտաների քննադատությունը եւ հիմնական լրատվամիջոցների նկատմամբ անվստահության խթանումը այն ուղղություններն են, որոնցում AfD-ի եւ Թրամփի քաղաքական հաղորդագրությունները որոշակի ընդհանրություններ ունեն:

Սաքսոնիա-Անհալթի ընտրությունների արդյունքներին Թրամփը նույնպես անդրադարձել է իր Truth Social հարթակում՝ ցույց տալով, որ Գերմանիայում AfD-ի աճը հետաքրքրություն է առաջացնում նաեւ ԱՄՆ-ում:

Ինչո՞ւ է Ռուսաստանը հետաքրքրված AfD-ի հաջողությամբ

AfD-ի դիրքորոշումը Ռուսաստանի նկատմամբ եւս կուսակցությանը առանձնացնում է Գերմանիայի հիմնական քաղաքական ուժերից:

Կուսակցությունը դեմ է Ուկրաինային ռազմական օգնության շարունակմանը, ցանկանում է վերանայել Ռուսաստանի նկատմամբ սահմանված պատժամիջոցները եւ կողմ է ավելի էժան ռուսական էներգակիրների ձեռքբերմանը:

Հենց այս պատճառով AfD-ի հաջողությանը դրական արձագանքներ են հնչել նաեւ Մոսկվային մոտ կանգնած շրջանակներից:

Ռուսաստանի ուղղակի ներդրումների հիմնադրամի ղեկավար Կիրիլ Դմիտրիեւը AfD-ի արդյունքը որակել է որպես «պատմական»՝ միաժամանակ քննադատելով Գերմանիայի գործող կառավարությանը:

Ռուսաստանի համար Գերմանիայի քաղաքականության փոփոխությունը կարեւոր է, քանի որ Բեռլինը Ուկրաինային ռազմական եւ ֆինանսական աջակցության գլխավոր եվրոպական կենտրոններից է: Հետեւաբար, Գերմանիայի ներսում Ռուսաստանի նկատմամբ քաղաքականության փոփոխության օգտին հանդես եկող ուժի հզորացումը Մոսկվայում դիտարկվում է որպես դրական զարգացում:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԿԱՇԱՌՔԻ ԳՈՐԾՈՎ

Ո՞Վ Է ԿԱՐԵՆ ՋԱԶՅԱՆԸ

Գեղարքունիքի մարզպետարանում տարիներ շարունակ առանցքային դաշտոն զբաղեցնող դաշտոնյան հայտնվել է իրավապահների ուշադրության կենտրոնում:

ArmLur.am-ը երեկ գրել էր, որ ձերբակալվածը Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետը: Մենք տեղեկացան, որ խոսքը Կարեն Ջազյանի մասին է:

Հակակոռուպցիոն կոմիտեն պաշտոնապես հաստատել է, որ այսօր կաշառք տալու եւ ստանալու դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում ձերբակալվել են Գեղարքունիքի մարզի մի շարք դպրոցների տնօրեններ, ինչպես նաեւ մարզպետի աշխատակազմի համապատասխան վարչության պետը: Իրավապահները հայտնում են, որ վարչության պետը մեղադրվում է մի խումբ անձանց, այդ թվում՝ դպրոցների տնօրենների օգտին հովանավորչության եւ թողտվության դիմաց մի քանի դրվագով կաշառք ստանալու մեջ:

Ուշագրավ է, որ Ջազյանը Գեղարքունիքի մարզպետարանի համակարգում նոր մարդ չէ: Մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքի համաձայն՝ նա կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետի պաշտոնին նշանակվել է 2018 թվականի մարտի 30-ին եւ այդ պաշտոնը զբաղեցնում է արդեն ավելի քան ութ տարի:

Հատկանշական է նաեւ, որ ձերբակալվածների թվում միայն վարչության պետը չէ. իրավապահները ձերբակալել են նաեւ Գեղարքունիքի մի շարք դպրոցների տնօրենների:

Հավելենք, որ ArmLur.am-ի տեղեկություններով ձերբակալվել են նաեւ Գեղարքունիքի մարզի Այրք եւ Ջաղացաձոր դպրոցների տնօրենները:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԼՔԵՑ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ դատավոր Վիգեն Քոչարյանի լիազորությունները դադարեցվել են:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատավորի լիազորությունները դադարում են, եթե նա հրաժարական է ներկայացնում:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով դատավորի լիազորությունները դադարում են այդ հարցի համար հրավիրված Բարձրագույն դատական խորհրդի նիստում դատավորի կողմից իր հրաժարականը պնդելու կամ այդ նիստին դատավորի չներկայանալու օրվանից:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին եւ 6-րդ կետերով նախատեսված հիմքերով դատավորի լիազորությունները դադարելու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի նախագահն անհապաղ հայտարարություն է տարածում դատական իշխանության պաշտոնական կայքում:

Ելնելով վերոգրյալից՝ հայտարարվում է, որ Բարձրագույն դատական խորհրդի 2026 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ ԲԴԽ-77-0-74 որոշմամբ՝ 2026 թվականի սեպտեմբերի 7-ից Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Վիգեն Վլադիմիրի Քոչարյանի կողմից ներկայացված հրաժարականի դիմումի հիման վրա վերջինիս լիազորությունները դադարել են:

Վիգեն Քոչարյանը 2024 թվին է նշանակվել Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր:

ՀԱՅՏՆԵԼ ԵՆ

Կաշառք տալու եւ ստանալու դեպքերի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում երեկ ձերբակալվել են Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի համապատասխան վարչության պետը, ինչպես նաեւ նույն մարզի մի շարք դպրոցների տնօրեններ: Այս մասին հայտնեցին Հակակոռուպցիոն կոմիտեից:

«Նշված վարչության պետը մեղադրվում է մի խումբ անձանց, այդ թվում՝ դպրոցների տնօրենների օգտին հովանավորչության եւ թողտվության դիմաց մի քանի դրվագով կաշառք ստանալու համար»,- ասված է հայտարարության մեջ:

Գրել էինք, որ ArmLur.am-ի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ ձերբակալվել են Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետը, ինչպես նաեւ դպրոցների տնօրեններ: ArmLur.am-ի տեղեկություններով ձերբակալություններն իրականացվել են կաշառքի քրեական վարույթի շրջանակներում:

ԿԱՆԽԵԼ ԵՆ

Սեպտեմբերի 4-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալը պահպանության ապահովման բաժնի ծառայողների ուղեկցությամբ տեղափոխվել է Երեւանում գործող ատամնաբուժական կենտրոն: Այս մասին հայտնում են ՔԿ-ից:

Բժշկական կենտրոնում գտնվելու ընթացքում դատապարտյալը ցանկություն է հայտնել օգտվել սանհանգույցից: Մուտք գործելուց առաջ ծառայողները, օրենքով սահմանված կարգով, իրականացրել են ակնադիտական զննություն, ինչի արդյունքում զուգարանակոնքի ջրի բաքի տեսանելի հատվածում հայտնաբերել են սպիտակ, կպչուն ժապավենով ամրացված սեւ փաթեթ՝ առանձնացված երկու փաթեթներով:

Փաթեթներից մեկում առկա է եղել թմրանյութի նմանվող, դեղնականաչավուն զանգված՝ 4.9 գրամ քաշով, իսկ մյուսում՝ սպիտակ, բյուրեղանման զանգված՝ 1.9 գրամ քաշով:

Դեպքի առթիվ նախապատրաստված նյութերն ուղարկվել են ՀՀ ՔԿ Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին քրեական վարույթ նախաձեռնելու հարցը քննարկելու նպատակով:

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ ԵՆ

ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ օտարերկրյա քաղաքացին առանձնապես խոշոր չափերով՝ շուրջ 5 կգ «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցը մաքսանենգ ճանապարհով տեղափոխել է Հայաստան:

Նախաքննության փուլում ՀՀ ՆԳՆ ոստիկանության աշխատակիցների հետ համատեղ իրականացված միջոցառումների արդյունքում պարզվել է թմրամիջոցների տեղադրման վայրը, որտեղ փաթեթները վերցնելու պահին ձերբակալվել են Երեւան քաղաքի բնակիչներ Ա.Մ.-ն, Տ.Բ.-ն, Դ.Բ.-ն եւ ներկայացվել վարույթն իրականացնող մարմնին:

Նրանց նկատմամբ հսկող դատախազի որոշմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 44-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանք ապօրինի իրացնելու փորձը): Ա.Մ.-ն, Տ.Բ.-ն եւ Դ.Բ.-ն կալանավորվել են:

Նախաքննությունը շարունակվում է:

«ՄԵՐ ՁԵՎՈՎ»

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՈՒՂԱՐԿՎԵՑ ԴԱՏԱՐԱՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Վերժինե Վարդանի Ստեփանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ հանդիսանալով «Մեր Ձեւով» ազգային արժեքների պահպանության բարեգործական հասարակական կազմակերպության Վայքի տարածքային գրասենյակի ղեկավար եւ ունենալով ծառայողական դիրքից բխող հեղինակություն նույն գրասենյակի աշխատակիցների մոտ, 2025թ. հոկտեմբերի 15-ից մինչեւ 18-ն ընկած ժամանակահատվածում՝ քննությամբ չպարզված օրը, ծառայողական դիրքից բխող հեղինակությունն օգտագործելով՝ նույն գրասենյակի աշխատակից համարվող Ամալիա Արտակի Թարոյանին շանտաժի՝ նրան այդ կազմակերպությունում աշխատելու իրավունքից զրկելու սպառնալիքի միջոցով հարկադրել է մասնակցել 2025թ. հոկտեմբերի 18-ին Երեւան քաղաքի օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի տարածքում ի աջակցություն Սամվել Սարգսի Կարապետյանի կազմակերպված հավաքին:

Բացի այդ, Վերժինե Վարդանի Ստեփանյանը հանդիսանալով «Մեր Ձեւով» ազգային արժեքների պահպանության բարեգործական հասարակական կազմակերպության Վայքի տարածքային գրասենյակի ղեկավար եւ ունենալով ծառայողական դիրքից բխող հեղինակություն նույն գրասենյակի աշխատակիցների մոտ, ծառայողական լիազորություններով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով տարբերակված վերաբերմունք է դրսեւորել նույն գրասենյակի աշխատակից համարվող Ամալիա Արտակի Թարոյանի նկատմամբ, որը ոտնահարել է նրա աշխատանքային իրավունքը, այն է՝ իմանալով, որ Ամալիա Արտակի Թարոյանը տարաբնույթ գործոններով պայմանավորված չի կիսում Սամվել Սարգսի Կարապետյանի ունեցած՝ երկրի վիճակին վերաբերող կարծիքը, Ա.Թարոյանից պահանջել է աշխատանքային պարտականությունների մեջ չմտնող՝ էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դեմ տեսանյութ պատրաստել եւ հրապարակել «Facebook» սոցիալական ցանցի անձնական էջում, իսկ վերջինիս կողմից այն չհրապարակելուց հետո, առանց իրավաչափ նպատակի այլ քաղաքական հանգամանքի հիմքով 2025թ. նոյեմբերի 10-ին «WhatsApp» հավելվածի միջոցով հաղորդագրություն է ուղարկել նրան՝ պահանջելով աշխատանքից ազատման դիմում ներկայացնել «Մեր Ձեւով» ազգային արժեքների պահպանության բարեգործական հասարակական կազմակերպությունից, այնուհետեւ 2025 թվականի նոյեմբերի 11-ին Ամալիա Թարոյանն ազատվել է աշխատանքից:

● *Մարզերում օգոստոսի 31-ից սեպտեմբերի 7-ը պարեկները հայտնաբերել են ոչ սթափ 309 վարորդ:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՄՖԻԹԱՏՐՈՆ ԵՆ ԿԱՌՈՒՑԵԼ

Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքը հայտնում է, որ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) «Դիմակայունություն ի սկզբանե» ծրագրի շրջանակներում Իջեւան համայնքում ստեղծվել է բազմաֆունկցիոնալ հանրային տարածք, որի պոտենցիալ շահառուների թիվը կազմում է մոտ 19,000 մարդ (որոնց 53%-ը կանայք են): Օգոստոսի 19-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Բազմաֆունկցիոնալ հանրային տարածքը Իջեւան քաղաքի ո՞ր հատվածում է ստեղծվել, կահավորվել այն, ինչքա՞ն գումար է ծախսվել այդ նպատակով, շինարարական ո՞ր կազմակերպությունն է այն ստեղծել, ի՞նչ գործունեություն է իրականացվում այդ տարածքում»: Տավուշի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արման Գորգյանի ստորագրությամբ պատասխանում նշված է. «ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի «Դիմակայունություն ի սկզբանե» ծրագիրը աշխատանքներն իրականացրել է Իջեւան համայնքի հետ: Մասնավորապես Իջեւանի համայնքային զբոսայգում կառուցվել է ամֆիթատրոն եւ կահավորվել: Նշված աշխատանքներն իրականացվել են ՄՄԼ ՍՊԸ-ի կողմից: Այլ մանրամասների համար առաջարկում ենք դիմել Իջեւանի համայնքապետարան»: Իջեւանի համայնքային զբոսայգում ամֆիթատրոնի կառուցումը եւ կահավորվելը ի՞նչ կապ ունի դիմակայունության հետ:

ԳՈՐԾԱՐԿՈՒՄԻՑ ԼՈՒՐ ՉԿԱ

Հայաստանի կառավարության որոշմամբ՝ 2020թ. հուլիսի 1-ից վաճառվող միսը պարտադիր պետք է ունենար սպանդանոցային ծագում՝ անասունների մորթը պետք է իրականացվեր սպանդանոցում: Հետո այդ որոշման կիրարկումը հետաձգվեց, սակայն ներկայում օրենքով պարտադիր է, որ հասարակական սննդի օբյեկտներում տարբեր ճաշատեսակների մեջ մատուցվող միսն ունենա սպանդանոցային ծագում: Դիլիջան քաղաքում ի՞նչն է շատ՝ռեստորանները, սրճարանները, սակայն շուրջ 17 հազար բնակչություն ունեցող Դիլիջան քաղաքում եւ Դիլիջան խոշոր համայնքի գյուղերում՝ Գոշում, Հաղարծինում, Թեղուտում, Հովքում, Խաչարձանում, Աղավնավանքում, սպանդանոց չկա: Ուշագրավ է, որ միայն Դիլիջանում է այդ վիճակը՝Տավուշի մարզի 3 խոշոր համայնքներում՝ Իջեւանում, Նոյեմբերյանում, Բերդում, օրինական հիմունքներով գործում են սպանդանոցներ: Եւ ոչ ոք չգիտի՝ Դիլիջան քաղաքում վաճառվող, ռեստորաններում հրամցվող մսե ուտեստներն անվտանգ են, թե՞ սպառնալիք են մարդկանց առողջությանը: Այս խնդրին պետք է որ տեղյակ լինի ծագումով Տավուշի մարզից վարչապետ Նիկոլ Փաշինյանը, որը հաճախ է հյուրընկալվում իր հայրենի Իջեւանում եւ Դիլիջանում: Օգոստոսի 24-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում եմ արել՝ Դիլիջան համայնքում ե՞րբ, ո՞ւմ միջոցներով է սպանդանոց գործարկվելու: Մարզպետի աշխատակազմից հայտնել են. «Դիլիջան համայնքում սպանդանոց կառուցելու եւ գործարկելու վերաբերյալ ստույգ տեղեկատվության համար առաջարկում ենք դիմել ՍԱՏՄ Տավուշի մարզային կենտրոն»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՆՉ ՈՒՆԻ

38.7 ՄԼՆ ԴՐԱՄ ԵԿԱՄՈՒՏ, BYD, MAZDA

ArmLur.am-ը շարունակում է ուսումնասիրել պետական պաշտոնյաների գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի վերաբերյալ հայտարարագրերը եւ դրանք ներկայացնել հանրությանը: Այս անգամ ուսումնասիրել ենք ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Օկսաննա Աբրահամյանի 2025 թվականի տարեկան հայտարարագիրը՝ ներկայացնելով նաեւ, թե ով է նա եւ ինչ ճանապարհ է անցել մինչեւ պետական համակարգում նոր պաշտոն ստանձնելը:

Օկսաննա Աբրահամյանը ՀՀ արդարադատության նախարարի տեղակալի պաշտոնը ստանձնել է 2025 թվականի փետրվարի 25-ին:

Նրա աշխատանքային գործունեությունը մինչ այդ հիմնականում կապված է միջազգային կազմակերպությունների, բրիտանական դիվանագիտական կառույցների եւ ծրագրերի կառավարման հետ:

Ո՞վ է Օկսաննա Աբրահամյանը

2024-2025 թվականներին Աբրահամյանը եղել է «Միլենիում Փարթներս»-ի, ԱՄՆ ՄԶԳ-ի Գլոբալ պատասխանատվության ծրագրի եւ «Դիմադրող հաստատություններ» ռազմավարական կոռուպցիայի դեմ Հայաստանի մասնաճյուղի տնօրեն:

Մինչ այդ՝ 2017-2024 թվականներին, աշխատել է ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպանությունում եւ Միացյալ Թագավորության արտաքին գործերի նախարարությունում՝ որպես ծրագրերի ղեկավար:

2016-2017 թվականներին նույն կառույցներում զբաղեցրել է ծրագրերի պատասխանատուի պաշտոնը:

Աբրահամյանը նաեւ տնտեսագիտական գիտությունների թեկնածու է: 1997-2003 թվականներին սովորել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ասպիրանտուրայում: Ավելի վաղ՝ 1990-1995 թվականներին, սովորել է Երեւանի ժողովրդական տնտեսության ինստիտուտում:

2017-2018 թվականներին սովորել է Լոնդոնի City and Guilds ինստիտուտում եւ Մեծ Բրիտանիայի կառավարության Դիվանագիտական ակադեմիայում:

38.7 մլն դրամի եկամուտ

2025 թվականին Օկսաննա Աբրահամյանը հայտարարագրել է ընդհանուր 38 մլն 705 հազար 964 դրամի եկամուտ:

Դրանից 16 մլն 673 հազար 6 դրամը կազմել է աշխատանքի վարձատրությունը ՀՀ արդարադատության նախարարությունից:

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ից նա ստացել է 7 մլն 167 հազար 865 դրամի այլ եկամուտ, ինչպես նաեւ նույն բանկից՝ 4 մլն 500 հազար դրամի փոխառություն:

Հայտարարագրում նշված է նաեւ 1 մլն 756 հազար 900 դրամի եկամտային հարկի վերադարձ:

Արդշինբանկից ստացված տոկոսային եկամուտը կազմել է 773 հազար 387 դրամ:

Բացի այդ, «Միլենիում Փարթներս Քոնսալթինգ»-ից քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակում Աբրահամյանը ստացել է 21 հազար 150 ԱՄՆ դոլար:

Երկու անշարժ գույք

Աբրահամյանի հայտարարագրում առկա է երկու անշարժ գույք՝ երկուսն էլ Երեւանում՝ Արաբկիր վարչական շրջանում:

Դրանցից մեկը բազմաբնակարան բնակելի շենքում գտնվող գույք է, որը պատկանում է նրան միանձնյա սեփականության իրավունքով եւ ձեռք է բերվել 2014 թվականի հոկտեմբերի 14-ին՝ նվիրատվությամբ:

10.2 մլն դրամանոց BYD եւ Mazda

2025 թվականի ընթացքում Աբրահյանը ձեռք է բերել BYD մակնիշի ավտոմեքենա: 2025 թվականի արտադրության մեքենան նա գնել է հոկտեմբերի 3-ին՝ 10 մլն 200 հազար դրամով: Գործարքի մյուս կողմը «ԳՈԼԴ-ՖԼՈՒՐ» ՍՊԸ-ն է:

Տարվա վերջում նրա անունով առկա է եղել նաեւ 2015 թվականի MAZDA մակնիշի ավտոմեքենան, որը ձեռք է բերել 2020 թվականի հուլիսի 30-ին:

Այսպիսով, տարվա վերջում պաշտոնյան ունեցել է երկու ավտոմեքենա՝ BYD եւ MAZDA:

40 հազար դոլարի եւ 9 մլն դրամի պարտատոմսեր

Աբրահամյանը 2025 թվականի դեկտեմբերին ձեռք է բերել նաեւ պարտատոմսեր:

Մասնավորապես, դեկտեմբերի 10-ին նա գնել է 9 մլն դրամի, իսկ դեկտեմբերի 22-ին՝ 40 հազար ԱՄՆ դոլարի պարտատոմսեր: Երկու գործարքների մյուս կողմը «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն է:

Տարվա վերջում պարտատոմսերի արժեքը նույնն է մնացել՝ 9 մլն դրամ եւ 40 հազար ԱՄՆ դոլար:

Միլիոնավոր դրամներ՝ բանկային հաշիվներում եւ կանխիկ

Տարվա վերջում Աբրահամյանի բանկային հաշիվներում առկա են եղել մի քանի դրամային եւ դոլարային մնացորդներ: Դրանցից ամենախոշոր դրամային մնացորդը կազմել է 2 մլն 341 հազար 636 դրամ, իսկ առանձին ավանդի մնացորդը տարվա վերջում հասել է 2 մլն 659 հազար դրամի:

Կանխիկ միջոցների մասով տարվա սկզբում նա հայտարարագրել է 9 մլն 135 հազար դրամ, 24 հազար 200 ԱՄՆ դոլար եւ 7 հազար 300 եվրո:

Տարվա վերջում կանխիկ գումարը կազմել է 8 մլն 570 հազար դրամ, 22 հազար 300 ԱՄՆ դոլար եւ 5 հազար 400 եվրո:

Վարկի մնացորդը՝ 42.9 մլն դրամ

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Օկսաննա Աբրահամյանի վարկի մայր գումարի մնացորդը կազմել է 42 մլն 956 հազար 442 դրամ:

Տարվա ընթացքում վարկի մարմանն ուղղված վճարումները կազմել են ընդհանուր 11 մլն 327 հազար 223.7 դրամ:

Այսպիսով, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալի 2025 թվականի հայտարարագրում, բացի 38.7 մլն դրամ ընդհանուր եկամտից, առկա են երկու ավտոմեքենա՝ BYD եւ Mazda, երկու անշարժ գույք, 40 հազար դոլարի եւ 9 մլն դրամի պարտատոմսեր, ինչպես նաեւ զգալի դրամային եւ արտարժութային կանխիկ միջոցներ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐԻ ՏԻՐԱՊԵՏՄԱՆՆ Է ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼ

Լոռու մարզի դատախազությունը, պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, 2025 թվականի դեկտեմբերի 16-ից՝ Լոռու մարզպետի գրության հիման վրա, մեկնարկել է Վանաձոր համայնքի Հրանտ Մաթեւոսյանի անվան այգում գտնվող հողամասերը տարբեր անձանց տրամադրելու վերաբերյալ փաստաթղթերը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Վանաձոր համայնքի Հրանտ Մաթեւոսյանի անվան այգու հողատարածքները 2000-ական թվականների սկզբներին կնքված 25 պայմանագրերով վարձակալության, կառուցապատման կամ անհատույց օգտագործման իրավունքով տրվել են ֆիզիկական ու իրավաբանական 22 անձանց: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Վանաձորի Հրանտ Մաթեւոսյանի անվան այգու տարածքները վարձակալած եւ փաստացի տիրապետող 22 սուբյեկտների կողմից դրանք օգտագործվում են պայմանագրերի խախտումներով ու ոչ նպատակային: Արդյունքում՝ այգին հայտնվել է անբարեկարգ վիճակում:

Հիշեցնենք, որ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը Լոռու մարզ կատարած աշխատանքային այցի ընթացքում, 2026 թվականի օգոստոսի 19-ին շրջել էր նաեւ Հրանտ Մաթեւոսյանի անվան այգում, մի շարք հանձնարարականներ էր տվել մարզի դատախազին:

Լոռու մարզի դատախազությունում կատարված ուսումնասիրությունների արդյունքում՝ 2026 թվականի հունվարի 26-ին միջնորդագիր է հասցեագրվել Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատարին՝ 22 ֆիզիկական եւ իրավաբանական անձանց հետ կնքված 26 հողատարածքների վարձակալության, անհատույց օգտագործման եւ կառուցապատման պայմանագրերը լուծելու նպատակով:

Միջնորդագրի արդյունքում՝ 2026 թվականի սեպտեմբերի 7-ին դադարեցվել է այգու տարածքում՝ Կ.Դեմիրճյան փողոց 25/5-2 հողամաս հասցեում գտնվող՝ 32.6 քմ մակերեսով, 342 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով եւս 1 հողամասի նկատմամբ իրավաբանական անձի վարձակալության իրավունքը. հողատարածքը վերադարձվել է համայնքի տիրապետմանը:

Առ այսօր, դատախազական ներգործության արդյունքում, Վանաձոր համայնքի կողմից խզվել են ընդհանուր 12935.3 քմ մակերեսով 20 հողատարածքների վարձակալության եւ անհատույց օգտագործման պայմանագրեր, որոնցից կադաստրային գրանցում են ստացել 12-ը՝ 3792.45 քմ մակերեսով: Մյուս պայմանագրերի լուծման ուղղությամբ աշխատանքներն ընթացքի մեջ են:

● *Օգոստոսի 31-ից սեպտեմբերի 7-ը մայրաքաղաքում պարեկները հայտնաբերել են ոչ սթափ 188 վարորդ:*

ԱՇԽԱՐՀ

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ ԿԽՍՏԱՑՆԻ ԻՐԱՆԻ ԴԵՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Մեծ Բրիտանիայի կառավարությունը ներկայացրել է Իրանի դեմ պատժամիջոցների խստացման օրենսդրական միջոցներ: Ինչպես հայտնել է Միացյալ Թագավորության արտաքին գործերի փոխնախարար Սթիվեն Դաութին, սահմանափակումները կվերաբերեն Իսլամական Հանրապետության ֆինանսական համակարգին, առեւտրին եւ ծովային փոխադրումներին:

Խորհրդարանի կողմից հաստատման դեպքում կվերականգնվեն մի շարք պատժամիջոցներ, որոնք չեղարկվել էին 2015 թվականին Իրանի հետ կնքված միջուկային գործարքի համաձայն:

«Ֆինանսական միջոցներն էլ ավելի կսահմանափակեն Իրանի կառավարության հնարավորությունները՝ հասանելիություն ունենալու Մեծ Բրիտանիայի ֆինանսական համակարգին եւ միջոցներ ներգրավելու իր միջուկային ծրագրի ֆինանսավորման համար: Այս օրենսդրության շրջանակներում ընդլայնվում է ապրանքների, տեխնոլոգիաների եւ ծառայությունների ցանկը, որոնց նկատմամբ գործում են առեւտրային արգելքներ: Դա վերաբերում է այն ոլորտներին, որոնք առանցքային դեր են խաղում այն ճյուղերում, որոնք նպաստում են Իրանի միջուկային ներուժի մեծացմանը, ինչպիսիք են էներգետիկան, ծրագրային ապահովումը, մետալուրգիան, ոսկու արդյունահանումը, ինչպես նաեւ գործունեության ուղեկցող տեսակները, ներառյալ ծովային փոխադրումները, ապահովագրությունը եւ բանկային ծառայությունները», - ասված է Դաութիի հայտարարության մեջ:

Արգելվում է նաեւ «լրացուցիչ ապրանքների եւ տեխնոլոգիաների» արտահանումը, որոնք կարեւոր նշանակություն ունեն Իրանի սովորական սպառազինության արտադրության եւ միջուկային ներուժի զարգացման համար:

Բացի այդ, սահմանվում է իրանական օդանավերի վայրէջքի արգելք Մեծ Բրիտանիայում՝ բացառությամբ մի շարք դեպքերի:

Դաութին հավելել է, որ «օրենսդրությունն ընդլայնում է պատժամիջոցների սահմանման լիազորություններն այն նավերի նկատմամբ, որոնք ապահովում են Իրանի միջուկային ծրագրի իրագործումը եւ նպաստում նրա խափանարար եւ ապակայունացնող գործունեությանը»:

ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ

ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԸ ՑՈՒՑԱԿՎԵԼ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱՅՈՒՄ

Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ)՝ ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերը ցուցակվել են Հայաստանի ֆոնդային բորսայում:

Ցուցակման խորհրդանշական զանգը հնչել է սեպտեմբերի 8-ին, իսկ ՎԶԵԲ-ի պարտատոմսերի առեւտուրը Հայաստանի ֆոնդային բորսայում կմեկնարկի նույն օրը:

Արարողությանը մասնակցել եւ խորհրդանշական զանգը հնչեցրել են Կոնվերս Բանկի գլխավոր գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ Հրանտ Հակոբյանը, ՎԶԵԲ-ի մշտական գրասենյակի ղեկավար Ռեմոն Զաքարիան եւ Հայաստանի ֆոնդային բորսայի տնօրեն Հայկ Եգանյանը:

Կոնվերս Բանկի գլխավոր գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ Հրանտ Հակոբյանը նշել է. «ՎԶԵԲ-ի՝ ՀՀ դրամով թողարկված պարտատոմսերի ցուցակումը Հայաստանի ֆոնդային բորսայում կարեւոր իրադարձություն է մեր կապիտալի շուկայի զարգացման տեսանկյունից: Միջազգային հեղինակավոր ֆինանսական կառույցի կողմից նման գործիքի թողարկումն ու դրա հասանելիությունը տեղական շուկայում նպաստում են ֆինանսական շուկայի խորացմանը, տեղական արժույթով ֆինանսավորման գործիքակազմի ընդլայնմանը եւ ներդրողների համար նոր հնարավորությունների ստեղծմանը: Կոնվերս Բանկը կարեւորում է իր մասնակցությունը նման նախաձեռնություններին եւ շարունակելու է աջակցել Հայաստանի ֆինանսական էկոհամակարգի զարգացմանը»:

Հայաստանում ՎԶԵԲ-ի մշտական գրասենյակի ղեկավար Ռեմոն Զաքարիան նշել է. «ՎԶԵԲ-ի՝ ՀՀ դրամով պարտատոմսերի հաջող թողարկումն ու ցուցակումը վկայում են Հայաստանի ֆինանսական շուկայի ենթակառուցվածքների եւ տնտեսական հեռանկարների նկատմամբ մեր շարունակական վստահության մասին: Տեղական արժույթով կապիտալի շուկաների զարգացումը ՎԶԵԲ-ի առանցքային առաջնահերթություններից է, քանի որ այն նպաստում է խնայողություններն արդյունավետ ներդրումների ուղղելուն, ընդլայնում է բիզնեսի ֆինանսավորման հնարավորությունները եւ ամրապնդում տնտեսության դիմակայունությունը: Մենք շնորհակալ ենք Կոնվերս Բանկին եւ Հայաստանի ֆոնդային բորսային՝ այս գործարքը շուկա բերելու հարցում համագործակցության համար եւ ակնկալում ենք շարունակել համատեղ աշխատանքը՝ Հայաստանի կապիտալի շուկաների հետագա խորացման ուղղությամբ»:

Հայաստանի ֆոնդային բորսայի տնօրեն Հայկ Եգանյանը նշել է. «Ուրախ ենք ողջունելու ՎԶԵԲ-ի՝ տեղական արժույթով թողարկված պարտատոմսերի մուտքը Հայաստանի ֆոնդային բորսա: ՎԶԵԲ-ը երկար տարիներ Հայաստանի՝ տեղական արժույթով կապիտալի շուկայի զարգացման կարեւոր գործընկերներից է: Նոր թողարկումը եւս մեկ անգամ վկայում է Հայաստանի շուկայական ենթակառուցվածքների նկատմամբ վստահության եւ տեղական արժույթով պարտատոմսերի շուկայի զարգացման ներուժի մասին:

Այս պարտատոմսերի ցուցակումը դիտարկում ենք որպես եւս մեկ կարեւոր քայլ՝Հայաստանում առավել խոր, բազմազան եւ միջազգային շուկաներին ինտեգրված կապիտալի շուկա ձեւավորելու ճանապարհին»:

ՎԶԵԲ-ի՝ ՀՀ դրամով պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվել էր Հայաստանի ֆոնդային բորսայի հարթակում՝ աճուրդի միջոցով: Կոնվերս Բանկը հանդես է եկել որպես թողարկման տեղաբաշխող՝ ապահովելով ողջ գործընթացը:

Թողարկման ընդհանուր ծավալը կազմել է 5 մլրդ ՀՀ դրամ, տոկոսադրույքը լողացող է, շրջանառության ժամկետը՝ 36 ամիս, արժեկտրոնների վճարումները՝ կիսամյակային:

Մանրամասն՝ 010 511 211, converse-bank.am

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ԱՆԺԱՄԿԵՏ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐ

Յունիբանկը հաջողությամբ տեղաբաշխում է Հայաստանում առաջին հիբրիդային ներդրումային առաջարկի շրջանակում 3.9 մլրդ դրամ ծավալով թողարկված բաժնետոմսերը: Առաջարկի համաձայն՝ բանկը ներդրողներին հնարավորություն է ընձեռում մասնակցել բաժնետոմսերի նոր թողարկմանը եւ ձեռք բերել 13.25% տարեկան արժեկտրոնային եկամտաբերությամբ անժամկետ պարտատոմսեր:

Ներդրումային նոր լուծումը համատեղում է բաժնետոմսերում ներդրված կապիտալի աճի ներուժն ու անժամկետ պարտատոմսերից ստացվող կանխատեսելի եկամուտը՝ ներդրողներին առաջարկելով պորտֆելի ձեւավորման առավել դիվերսիֆիկացված մոտեցում: Առաջարկը կգործի մինչեւ 2026 թվականի սեպտեմբերի 9-ը:

2015 թվականին Հայաստանի ֆոնդային բորսայում առաջին IPO-ն իրականացնելուց ի վեր Յունիբանկի բաժնետոմսերի գինն աճել է մոտ 70%-ով, իսկ ազատ շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսերի մասնաբաժինը (free float) հասել է 10.7%-ի: Վերջին երեք տարիների ընթացքում Բանկի բաժնետոմսերի միջին տարեկան շահութաբաժնային եկամտաբերությունը կազմել է 10-12%: 2025 թվականի արդյունքներով բանկի բաժնետերերին վճարվել է 9.3 մլրդ ՀՀ դրամի շահութաբաժին:

25 տարիների ընթացքում Յունիբանկն ամուր դիրքեր է ձեւավորել Հայաստանի բանկային համակարգում՝ բարձր ֆինանսական արդյունքների, տեխնոլոգիական նորարարությունների եւ հաճախորդակենտրոն մոտեցման շնորհիվ: Յունիբանկն առաջին բանկն էր Հայաստանում, որը ներդրեց արհեստական բանականության վրա հիմնված վարկային սքորինգ եւ շարունակում է զգալի ներդրումներ կատարել թվային փոխակերպման ուղղությամբ, այդ թվում՝ ֆիզիկական անձանց հնարավորություն տալով առցանց դառնալ բանկի հաճախորդ՝ կենսաչափական նույնականացման միջոցով:

Moody's միջազգային գործակալությունը Յունիբանկի երկարաժամկետ ավանդների վարկանիշի հեռանկարը «Կայուն»-ից բարձրացրել է «Դրական» եւ վերահաստատել B1 վարկանիշը, ինչը պայմանավորված է Բանկի ակտիվների բարձր որակով, կայուն շահութաբերությամբ եւ ֆինանսավորման առավել անկայուն աղբյուրներից սահմանափակ կախվածությամբ:

Բաժնետոմսերի ազդագիրը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2026 թ. մայիսի 13-ի N 1/210Ա որոշմամբ, անժամկետ պարտատոմսերի ծրագրային ազդագիրը՝ ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 2025 թ. նոյեմբերի 26-ի N 1/427Ա որոշմամբ, իսկ ծրագրային ազդագրի լրացումները՝ 2026 թ. մայիսի 22-ի N 1/228Ա եւ հունիսի 29-ի N 1/282Ա որոշումներով: Ներդրողները բաժնետոմսերի եւ անժամկետ պարտատոմսերի ազդագրերը, ինչպես նաեւ կից ներկայացվող փաստաթղթերի տպագիր տարբերակները կարող են ստանալ Յունիբանկի գլխամասային գրասենյակում եւ մասնաճյուղերում, իսկ էլեկտրոնային տարբերակները՝www.unibank.am:

●*«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ԿԻՍՎԵԼ Է

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՋԵՐՄ ՊԱՀԵՐ

Ջասթին Բիբերը սեպտեմբերի 7-ին ինստագրամում հրապարակել է ընտանեկան լուսանկարների նոր շարք՝ երկրպագուներին ցույց տալով կնոջ՝ Հայլի Բիբերի, եւ նրանց 2-ամյա որդու՝ Ջեք Բլյուզի հետ անցկացրած առօրյա ու ջերմ պահերը:

Լուսանկարների շարքը երգիչը սկսել է Հայլիի հետ արված անկեղծ սելֆիով: Հայլին լուսանկարում կրում է «Yukon» գրությամբ սեւ գլխարկ, որը, ինչպես նշվում է, հղում է Ջասթինի երաժշտությանը: Հաջորդ կադրում երգիչը երեւում է որդուն գրկած՝ ձեռքին սառը սուրճ:

Լուսանկարներից մեկում Ջասթինը Ջեքի հետ հարմարավետ նստած է բազմոցին: Լուսանկարների շարքում տեղ են գտել նաեւ Հայլիի հետ եւս մեկ ընտանեկան կադր եւ գոլֆի թեմայով լուսանկար՝ գնդակներով շրջապատված գոլֆի փայտ:

Ընտանիքը վերջերս նշել է Ջեք Բլյուզի երկրորդ տարեդարձը: Օգոստոսի 22-ին Հայլին Instagram Stories-ում հրապարակել էր փոքրիկի համար պատրաստված տոնական նախաճաշի լուսանկարները: Մկնիկի տեսքով բլիթները զարդարված էին հարած սերուցքով եւ վարդագույն մոմերով: Հրապարակման ֆոնին հնչում էր Ջասթին Բիբերի «Everything Hallelujah» երգը:

Հայլին որդուն՝ Ջեք Բլյուզին, աշխարհ է բերել 2024 թվականի օգոստոսի 22-ին: Ջույգը վերջին շրջանում պարբերաբար կիսվում է որդու հետ կապված ընտանեկան դրվագներով՝ միաժամանակ պահպանելով նրա անձնական կյանքի որոշակի սահմանները: Հայր ու որդի հատկապես մտերմացել են հոկեյի շուրջ: Ջասթինը, որը տարիներ շարունակ Toronto Maple Leafs-ի երկրպագու է, 2025 թվականի հունիսին հրապարակել էր Ջեքի լուսանկարը՝ փոքրիկ Toronto Maple Leafs մարզաշապիկով: Այն կրում էր թիմի ավագ Օսթոն Մեթյուզի անունը: Մեթյուզը եւս արձագանքել էր փոքրիկ երկրպագուի աջակցությանը՝ Ջասթինի հրապարակման մեկնաբանություններում թողնելով կապույտ սրտիկ, իսկ Toronto Maple Leafs-ի պաշտոնական էջը նույնպես արձագանքել էր՝ հրապարակելով երեք կապույտ սրտիկ:

Ջասթին Բիբերի վերջին ընտանեկան հրապարակումը եւս մեկ անգամ ցույց է տալիս երգչի առօրյայի ավելի հանգիստ ու ընտանեկան կողմը՝ Հայլիի եւ փոքրիկ Ջեքի հետ անցկացրած պարզ, բայց հիշարժան պահերով:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԵԳԱՄԵՆՍԱՑԻԱ Է ՀԱՅՏՆԵԼ

Արգենտինայի ազգային հավաքականի եւ «Բոկա Խունիորսի» նախկին հարձակվող Կարլոս Տեւեսը հայտարարել է, որ արգենտինացի Լիոնել Մեսսին եւ պորտուգալացի Կրիշտիանու Ռոնալդուն կարող են հանդես գալ նույն թիմում իր հրաժեշտի խաղի ժամանակ: Սպասվում է, որ պատմական հանդիպումը կկայանա 2026 թվականի դեկտեմբերին Բուենոս Այրեսի «Լա Բոմբոներա» մարզադաշտում:

«Ես միշտ երազել եմ Կրիշտիանուին եւ Լեոյին տեսնել նույն թիմում: Նրանք բոլոր ժամանակների երկու մեծագույն խաղացողներն են: Ես կապ հաստատեցի նրանց հետ, հատկապես՝ Կրիշտիանուի: Ասացի նրան, որ ցանկանում եմ իրեն եւ Լեոյին տեսնել նույն թիմում իմ հրաժեշտի խաղին, որպեսզի ողջ աշխարհը մեկընդմիշտ տեսնի այդ կախարդանքը:Ռոնալդուն ասաց, որ այնտեղ կլինի: Լեոյին համոզելը նույնպես դժվար չէր: Նրանք երկուսն էլ իրենց համաձայնությունը տվել են: Անհամբերությամբ սպասում եմ դրան, այս հանդիպումը շատ հուզիչ է լինելու»,- ըստ armsport-ի՝Տեւեսի խոսքերն է մեջբերում Footmercato պարբերականը:

Հիշեցնենք, որ Տեւեսը Ռոնալդուի հետ խաղացել է անգլիական «Մանչեսթեր Յունայթեդում», իսկ Մեսսիի հետ՝ Արգենտինայի ազգային հավաքականում: Ներկայումս 41-ամյա Ռոնալդուն հանդես է գալիս Սաուդյան Արաբիան ներկայացնող «Ալ-Նասրում», իսկ 39-ամյա Մեսսին կարիերան շարունակում է ամերիկյան ՄԼՍ-ում՝ պաշտպանելով «Ինտեր Մայամիի» գույները:

ՄԱՐԶԱԿԱՆ

Ի՞ՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ

Կատալոնական «Բարսելոնայի» պաշտպան Էրիկ Գարսիան Լա Լիգայի 4-րդ տուրի՝ «Վալենսիայի» դեմ խաղում լուրջ վնասվածք է ստացել: Հանդիպման առաջին կեսում իսպանացի ֆուտբոլիստը պատահաբար բախվել է թիմակից Ռոդրիին, ինչի հետեւանքով նրա քթից արյունահոսություն է սկսվել: Արդեն 26-րդ րոպեին Գարսիան ստիպված է եղել լքել խաղադաշտը՝տեղը զիջելով Ժյուլ Կունդեին:

Mundo Deportivo-ի փոխանցմամբ՝հետագա բուժզննումը ցույց է տվել, որ վնասվածքն ավելի բարդ է, քան թվում էր առաջին հայացքից, գրում է armsport-ը: Գարսիայի մոտ ախտորոշվել է քթի նոր կոտրվածք եւ միջնապատի շեղում: «Կապտանռնագույնների» գլխավոր բժիշկ Ռիկարդ Պրունան դեռ հանդերձարանում հասցրել է տեղում վերադիրքավորել միջնապատը: «Բարսելոնայի» գլխավոր մարզիչ Հանսի Ֆլիկը խաղից հետո փոքր-ինչ հանգստացրել է երկրպագուներին՝նշելով, որ բժշկական միջամտությունից հետո ֆուտբոլիստն իրեն ավելի լավ է զգում: Ակումբի բժիշկները դեռ պետք է վերջնականապես գնահատեն վիրահատության անհրաժեշտությունը, սակայն իսպանական AS-ը հայտնում է, որ Գարսիան առաջիկա հանդիպումներում խաղադաշտ դուրս կգա հատուկ պաշտպանիչ դիմակով: Հատկանշական է, որ նախորդ մրցաշրջանում՝Չեմպիոնների լիգայի «Բրյուգեի» դեմ խաղում, նա նմանատիպ վնասվածք էր ստացել եւ կրկին ստիպված էր հանդես գալ դիմակով՝խաղադաշտ վերադառնալով վնասվածքից ընդամենը երեք օր անց: Այս անգամ պաշտպանի լիարժեք վերականգնման համար կատալոնական ակումբը լրացուցիչ ժամանակ ունի. Գարսիան նախորդ եվրագավաթային խաղում ստացած կարմիր քարտի պատճառով անկախ վիճակից բաց էր թողնելու ՉԼ-ի հաջորդ՝ «Ֆեյենորդի» դեմ հանդիպումը: Սպասվում է, որ նա թիմին կմիանա արդեն «Լեւանտեի» դեմ խաղում:

ՉԵՄՊԻՈՆԱԿԱՆ ԳՈՏԵՄԱՐՏ

Ազատ ոճի ըմբշամարտի Եվրոպայի քառակի չեմպիոն եւ աշխարհի առաջնության եռակի բրոնզե մեդալակիր Արսեն Հարությունյանն ամերիկյան Real American Freestyle (RAF) կազմակերպությունում չեմպիոնական գոտեմարտ կանցկացնի: Հայ ըմբիշը հնարավորություն է ստացել պայքարելու թեթեւագույն քաշային կարգի չեմպիոնական տիտղոսի համար: Այս մասին հայտնում է կազմակերպության մամուլի ծառայությունը, նշում է armsport-ը: Տիտղոսային այս դիմակայությունը կկայանա սեպտեմբերի 18-ին ԱՄՆ-ի Ֆլորիդա նահանգի Մայամի քաղաքում նախատեսված RAF 13 մրցաշարի շրջանակում: Օլիմպիական խաղերի կրկնակի մասնակցի մրցակիցը կլինի կազմակերպության գործող չեմպիոն, ամերիկացի Օսթին Դեսանտոն: Վերջինս մինչ օրս անպարտելի է RAF-ում՝ իր ակտիվում ունենալով երեք անընդմեջ հաղթանակ, ինչպես նաեւ հանդիսանում է 2026 թվականի Պանամերիկյան առաջնության հաղթող: Արսեն Հարությունյանն այս իրավունքը վաստակել է լիգայում ունեցած վստահ ու տպավորիչ ելույթների շնորհիվ: Նա RAF-ում հասցրել է անցկացնել երկու գոտեմարտ՝ տոնելով նույնքան հաղթանակ: Նորամուտի գոտեմարտում հայ մարզիկը բացահայտ առավելությամբ հաղթել էր Քեյլեբ Սմիթին, իսկ դրանից հետո Միլուոքիում կայացած RAF 11-ի ժամանակ ծանր դիմակայությունում պարտության էր մատնել Բեն Դավինոյին:

Հիշեցնենք, որ Հարությունյանի տիտղոսային գոտեմարտի հաջորդ օրը՝ Լոս Անջելեսում կայանալիք UFC 331 մրցաշարի համահիմնական իրադարձության շրջանակում, հայ մարտիկ Արման Ծառուկյանը կմենամարտի Մաուրիսիո Ռուֆիի դեմ:

ԿԱՐԻԵՐԱՆ ԿԱՎԱՐՏԻ

«Բարսելոնայի» եւ «Բետիսի» նախկին եզրային հարձակվող Քրիստիան Տելյոն 35 տարեկանում ավարտել է ֆուտբոլիստի պրոֆեսիոնալ կարիերան: Ըստ armsport-ի՝ այս մասին իսպանացին հայտնել է իր սոցցանցերի էջերում: Տելյոն իր նորամուտն է նշել «կապտանռնագույնների» գլխավոր թիմում 2011 թվականին: 2014-2016 թվականներին նա վարձավճարով հանդես է եկել պորտուգալական «Պորտուում», իսկ 2016-2017-ին պաշտպանել է իտալական «Ֆիորենտինայի» գույները: Արդեն 2017 թվականին Տելյոն լիարժեք պայմանագիր է կնքել «Բետիսի» հետ, որտեղ անցկացրել է հինգ տարի: Կարիերայի մայրամուտին իսպանացին խաղացել է ամերիկյան «Լոս Անջելես Գելաքսիում», իսկ նրա վերջին թիմերը եղել են մերձավորարեւելյան երեք ակումբներ՝ Սաուդյան Արաբիան ներկայացնող «Ալ-Ֆատեհն» ու «Ալ-Օրուբան», ինչպես նաեւ ԱՄԷ-ի «Փալմ Սիթին»:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՆԿԵՂԾՈՐԵՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ Է

Մադրիդի «Ռեալի» եւ Ֆրանսիայի ազգային հավաքականի հարձակվող Կիլիան Մբապեն խոսել է իրեն աշխարհի լավագույն ֆուտբոլիստ համարելու եւ 2026 թվականի «Ոսկե գնդակին» արժանանալու հավակնությունների մասին, գրում է armsport-ը: «Ո՞ւմ կհանձնեի «Ոսկե գնդակը»: Ես այն կտայի ինքս ինձ, եւ դա գողություն չէր լինի: Սա անհատական մրցանակ է, որտեղ հաշվի է առնվում ֆուտբոլիստի անհատական ներդրումը: Երբ նայում եմ փաստարկներին.... ինքս ինձ ասում եմ՝ այո, դա գողություն չէր լինի»,- 27-ամյա հարձակվողի խոսքերն է մեջբերում ֆրանսիական L'Equipe պարբերականը:

Անդրադառնալով լրագրողների այն հարցին, թե արդյոք նա իրեն համարում է աշխարհի լավագույն խաղացողը, ռմբարկուն հավելել է. «Ես միշտ այդպես եմ կարծում, բայց դա շատ անձնական հարց է: Յուրաքանչյուրն իր կարծիքն ունի. ոմանք կհամաձայնեն դրա հետ, մյուսները՝ ոչ: Սա վիճելի հարց է, եւ պարտադիր չէ, որ բոլորը մտածեն այնպես, ինչպես ես»:

Նշենք, որ ընթացիկ մրցաշրջանում Իսպանիայի առաջնության 4 հանդիպումներում Մբապեն արդեն հասցրել է դառնալ 4 գոլի հեղինակ:

● *Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում սեպտեմբերի 11-ին՝ ժամը 19:00-ին, կկայանա «Անուշ» օպերան:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ո՞r դեռfերում է զորակոչիկին տարկետում տրվում ընտանեկան պայմաններից ելնելով:

Գառնիկ Սիմոնյան,
67 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. *Սկիզբը՝ նախորդ համարում*

Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրվում է այն քաղաքացուն, որն ունի՝

3. Քաղաքացին համարվում է միայնակ ծնող ունեցող, եթե՝

1) մյուս ծնողը մահացել է կամ դատական կարգով ճանաչվել է մահացած.

2) մյուս ծնողն անհայտ է (օրենքով սահմանված կարգով հայրություն կամ մայրություն չի ճանաչվել) կամ դատական կարգով ճանաչվել է անհայտ բացակայող.

3) մինչեւ քաղաքացու 18 տարին լրանալն առնվազն հինգ տարի առաջ ծնողներն ամուսնալուծվել են, եւ ծնողները բնակվում են միմյանցից առանձին.

4) ծնողների ամուսնությունն օրենքով սահմանված կարգով չի գրանցվել, եւ ծնողները բնակվում են միմյանցից առանձին:

4. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով չնախատեսված դեպքերում քաղաքացուն ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում կարող է տրվել քաղաքացու դիմումի հիման վրա եւ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով՝ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով սահմանված կարգով:

5. «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված դեպքում քաղաքացուն տարկետում տրվում է մինչեւ նրա ծնողների կամ միայնակ ծնողի այլ զավակի 18 տարին լրանալու կամ պարտադիր զինվորական ծառայությունից արձակվելու օրը, իսկ 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դեպքում՝ մինչեւ երկրորդ երեխայի կամ առնվազն զույգ երեխաների ծննդյան օրը: «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով նախատեսված մյուս դեպքերում քաղաքացուն տարկետում տրվում է մինչեւ նրա 27 տարին լրանալու օրը: Եթե 27 տարին լրանալու օրվա դրությամբ քաղաքացին չի կորցրել ստացած տարկետման իրավունքը, ապա 27 տարին լրանալու հիման վրա ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից:

ՀՀ ՊՆ

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս մասնակցել դրսեկության ձեւով (էքստեռն) ավարտական քննություններին:

Արշակ Գասպարյան,
54 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Հարցը կարգավորվում է ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 14 հոկտեմբերի 2010 թ. N 1507-Ն հրամանով հաստատված «Դրսեկության ձեւով (էքստեռն) փոխադրական եւ ավարտական քննություններ կազմակերպելու կարգի» պահանջներով: Հիմնական կրթության վկայական եւ միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար էքստեռն ավարտական եւ պետական ավարտական քննությունները կազմակերպվում են 3 քննաշրջաններով.

• 1-ին քննաշրջան՝ փետրվարի 15-ից մարտի 15-ը ներառյալ՝ ըստ նախարարի հաստատած ժամանակացույցի,

• 2-րդ քննաշրջան՝ ըստ ավարտական եւ պետական ավարտական քննությունների ժամանակացույցի, մյուս առարկաները՝ ըստ նախարարի հաստատած ժամանակացույցի,

• 3-րդ քննաշրջան՝ հոկտեմբերի 15-ից նոյեմբերի 15-ը ներառյալ՝ ըստ նախարարի հաստատած ժամանակացույցի:

Էքստեռն ավարտական եւ պետական ավարտական քննություններ կարող են կազմակերպվել նաեւ 1-ին եւ 3-րդ քննաշրջաններում՝ ըստ նախարարի հաստատած ժամանակացույցի:

Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի
եւ սպորտի նախարարություն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Խոշոր ավտովթար Երեւանում. «KamAZ»-ը Դավիթ Բեկի փողոցում բախվել է ծառերին, ապա կոտրել գազատար խողովակի երկաթե հենասյուները:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	0 + 4 + 17 + 21
	Կոտայքի լեռներ	+ 1 + 4 + 17 + 20
	Կոտայքի նախալեռներ	+ 7 + 10 + 21 + 24
	Գեղարքունիք	0 + 5 + 14 + 17
	Լոռի	0 + 4 + 17 + 21
	Տավուշ	+ 1 + 5 + 18 + 21
	Արագածոտնի լեռներ	0 + 4 + 17 + 20
	Արագածոտնի նախալեռներ	+ 7 + 11 + 21 + 25

	Արարատ	+ 8 + 12 + 23 + 26
	Արմավիր	+ 8 + 12 + 24 + 26
	Վայոց ձորի լեռներ	+ 1 + 4 + 17 + 20
	Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 13 + 24 + 26
	Սյունիքի լեռներ	0 + 4 + 13 + 17
	Սյունիքի նախալեռներ	+ 3 + 7 + 18 + 21
	Սյունիքի հովիտներ	+ 10 + 14 + 24 + 28
	Երեւան	+ 10 + 12 + 24 + 26

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **08.09.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*